ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2022/77

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2022 թ. N 77

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Հյուսիսային համալսարան» ՍՊԸ
Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 15/9

Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **4 տարի ժամկետով՝ 23.03.2018թ.- 23.03.2022թ**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2022 թվականի նոյեմբերի 15-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց՝ «Հյուսիսային համալսարան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Համալսարան, բուհ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 26 մայիսի 2021 թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 01 մարտի 2022 թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 11-14 ապրիլի 2022 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 07 հուլիսի 2022 թ.
թերությունների վերացման նախնական
ծրագրի ներկայացում՝ 10 օգոստոսի 2022 թ.

Հյուսիսային համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից անբավարար են գնահատվել **«Կառավարում ու վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Ենթակառուցվածք ու ռեսուրսներ» և «Արտաքին կապեր և միջազգայնացում»** չափանիշները:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Համալսարանի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և բուհի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. Համալսարանը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում

Համալսարանի ՄԿԾ-ները բխում են հաստատության առաքելությանից և համահունչ են ՀՀ ՈԱԾ-ի համապատասխան մակարդակների նկարագրիչներին:

Առկա է ՄԿԾ-ների մշակման և մշտադիտարկման կարգ, ՄԿԾ-ների արտաքին գնահատման, բենչմարքինգի իրականացման փորձ:

Համալսարանն իրականացնում է իր կրթական ծրագրերի բովանդակային համահունչություն այլ նմանատիպ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին շարժունությունն ապահովելու համար, որոշ ՄԿԾ-եր ենթարկվել են ներքին և արտաքին բենչմարքինգի՝ մի քանի ուսումնական ծրագրեր վերանայվել են՝ օտարերկրյա համալսարանների հետ կրկնակի դիպլոմով ՄԿԾ-ներ իրականացնելու նպատակով: Սակայն, չնայած ՄԿԾ-ների բենչմարքինգի և արտաքին գնահատումների առկայությանը՝ փաստացի ներքին շահակիցների շարժունությունը դեռևս սակավաթիվ է:

Համալսարանը ջանքեր է գործադրում ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչի ներդրմանը: Կրթական ծրագրերում ընդգրկված դասընթացները պարունակում են հետազոտական բաղադրիչ, իսկ բուհն իր բոլոր կառավարչական, ուսումնամեթոդական գործընթացներով փորձում է ապահովել այդ բաղադրիչի լիարժեք ներդրումը և զարգացումը:

ՄԿԾ-ների խնդիրները պարբերաբար քննարկվում են ամբիոնների նիստերի ժամանակ, սակայն այդ քննարկումներն ըստ էության ազդեցություն չունեն դասավանդման մեթոդների կիրառման վրա: Դեռևս շարունակում են գերակայել դասախոսակենտրոն դասավանդման և ուսուցման մեթոդները: Այդ տեսանկյունից դեռևս անհրաժեշտություն կա վերանայելու և բարելավելու ՄԿԾ-ներում նշված վերջնարդյունքները, ինչպես նաև ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդները:

Պրոֆեսորադասախոսական կազմը համալրված է բարձրակարգ մասնագետներով: Համալսարանում առկա են ՊԴ կազմի ընտրության, գնահատման ընթացակարգեր,

սահմանված են մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները, առկա են դասախոսների և որոշ վարչական կազմի պաշտոնի անձնագրեր: Բուհն ունի ՊԴ կազմի մրցութային ընտրության քաղաքականություն, որը հնարավորություն է տալիս տարբեր բնագավառներում փորձառություն ունեցող մասնագետների ներգրավմանը:

Համալսարանը իրականում կարևորում է պրոֆեսորադասախոսական կազմի կատարելագործումը: Համալսարանում վերապատրաստումները կազմակերպվում են դասընթացների, փորձի փոխանակման (բաց դասեր, թրեյնինգներ, սեմինար), ինչպես նաև դասավանդվող առարկային վերաբերող քննարկումների կազմակերպման ձևերով:

Այնուհանդերձ, բուհում կա ՊԴ կազմի երիտասարդացման և կայունության ապահովման անհրաժեշտություն:

Մշակված է պրոֆեսորադասախոսական կազմի տարբերակված հավելավճարների համակարգը, դրա հետ մեկտեղ կարևոր է, որ դրանք հիմնված չլինեն բացառապես ուսանողների գնահատականների վրա, այլ հաշվի առնվեն բազմագործոն գնահատման հիմունքները:

Թեև ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների և ռեսուրսների բարելավումն ու զարգացումը բուհի կողմից համարվում է ռազմավարական առաջնահերթություն, սակայն բյուջեի բաշխումը հստակորեն չի արտահայտում ռազմավարական ուղղություններով նախատեսված խնդիրները:

Շենքի ենթակառուցվածքները հարմարեցված չեն հատուկ կարիքներ ունեցող անձանց համար, դեռևս առկա չեն ռազմավարական ծրագրով նախատեսված ռեսուրսները և նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների կատարումը հավաստող փաստերը:

2. Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը

Հյուսիսային համալսարանի առաքելությունն ամրագրված է ինչպես կանոնադրությամբ, այնպես էլ 2016-2020 ու 2020-2025 թթ-ի ռազմավարական ծրագրերով և անփոփոխ է 2016 թ-ից ի վեր: Ռազմավարական ծրագրերով ներկայացվում են նպատակներ և այդ նպատակների իրագործմանն ուղղված գործողություններ, սակայն այն չի վերածվել գործուն փաստաթղթի: Համալսարանը դեռևս չի իրագործում ռազմավարական հստակ և իրագործելի պլանավորում, չի ապահովում երաշխիքներ ռազմավարական նպատակների իրագործելիության համար: Համալսարանն ունի ինչպես միանձնյա, այնպես էլ կոլեգիալ կառավարման մեխանիզմներ, որոնք կանոնակարգվում են համապատասխան փաստաթղթերով: Սակայն կոլեգիալ կառավարման գործընթացները դեռևս լիարժեք գործուն չեն և կարևոր որոշումների ընդունման գործընթացում շահակիցները լայն ներգրավվածություն չունեն:

Բացի այդ խնդրահարուց են որոշումների կայացման համար օբյեկտիվ տվյալների սակավությունը, ռիսկերի գնահատման և վերլուծության, ինչպես նաև քաղաքականությունների և ընթացակարգերի արդյունավետության գնահատման բացակայությունը:

Համալսարանը կարևորում է ՈԱ վարչության դերը որակի ապահովման գործընթացներում և որակի մշակույթի տարածման հարցում, քայլեր իրականացվել վարչության անկախության ապահովման ուղղությամբ: Վերանայվել են հետազոտության անցկացման մեխանիզմները, կիրառվում է առցանց հարցումների անցկացման գործիքակազմ: Հյուսիսային համալսարանն ունի որակի ապահովման քաղաքականություն և որոշ ընթացակարգեր, կարևորում է որակի

ապահովման գործընթացները և դրանց կառավարման համար հատկացնում է որոշակի ռեսուրսներ:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը:***

Համալսարանում առկա են ուսանողների հավաքագրման և ընդունելության համար գործուն մեխանիզմներ:

Նախորդ փորձագիտական զեկույցում տրված խորհրդատվության հիման վրա ակտիվացվել են կարիերային նպաստող ծառայությունները, շրջանավարտների հետ կապի մեխանիզմները, մասնավորապես՝ հավաքագրվել է շրջանավարտների բազա: Սակայն շրջանավարտների և կարիերայի կենտրոնը դեռևս չի դարձել շրջանավարտ-համալսարան կապի գլխավոր միջոց: Ուսանողների կողմից բարձր է գնահատվում թե՛ դասախոսական, թե՛ վարչական անձնակազմից տարամադրվող օժանդակությունը, կարևորվում է ուսանողների շրջանում սեփական իրավունքների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացումը:

Իրատեսական չէ հետազոտության ոլորտում բուհի հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարությունը, առկա չեն դրանց զարգացումն ապահովող երաշխիքներ: Թեև նախորդ հավատարմագրման գործընթացից հետո համալրվել է Գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոնի կազմը, սակայն գործող 5 ամբիոնների և Գիտական հետազոտությունների կենտրոնի մարդկային և ֆինանսական ռեսուրսները բավարար չեն նախանշած բավականին ընդգրկուն նպատակներն ու խնդիրները կյանքի կոչելուն: Այդ գործընթացում ներգրավված չեն ներքին և արտաքին շահակիցները:

Բացակայում է հետազոտության ոլորտում առևտրայնացման և միջազգայնացման քաղաքականությունը: Առկա չեն միջնաժամկետ ծրագրեր, ցածր են հետազոտության արդյունքների ցուցանիշները և հրապարակումները ազդեցության գործակից ունեցող պարբերականներում: Թույլ է հետազոտության և ուսումնառության կապը:

Բուհը նախորդ հավատարմագրումից հետո քայլեր է իրականացրել արտաքին կապերի հաստատման գործընթացների կանոնակարգման ուղղությամբ, այդուհանդերձ, դրանց արդյունքները դեռևս տեսանելի չեն, ինչպես նաև շարունակականության ապահովման մեխանիզմները կատարելագործման կարիք ունեն:

Գիտահետազոտական, միջազգայնացման և կրթական ոլորտներում հավակնոտ նպատակների իրագործման համար բավարար ֆինանսական միջոցներ չեն հատկացվում:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիրը հիմնականում իրատեսական է և իրականացումը կբերի որակական բարելավումների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Հյուսիսային համալսարան» ՍՊԸ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման

վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում ու վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Ենթակառուցվածք ու ռեսուրսներ» և «Արտաքին կապեր և միջազգայնացում»** չափանիշներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:

3. **Հատուկ ուշադրություն դարձնել.**
   - բուհի ռազմավարական պլանավորման, իրականացման, ինչպես նաև ՄԿԾ-ների մշակման և վերանայման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությանը,
   - Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության քաղաքականության վերանայմանը, ապահովելով այդ մեթոդների փոխկապակցվածությունը ՄԿԾ-ների վերջնարդյունքների հետ,
   - ՄԿԾ-ներում ՊԴ կազմին ներկայացվող պահանջների վերանայմանը, դրանք դարձնելով չափելի և թիրախային,
   - ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը,
   - որակի ապահովման համեմատական վերլուծության իրականացման և արդյունավետության գնահատման մեխանիզմների ներդրման անհրաժեշտությանը՝ ինչը կնպաստի գործնթացների ՊԻԳԲ շրջափուլով զարգացմանը,
   - ուսումնառության և հետազոտության կապի ամրապնդմանը,
   - Համալսարանի կառավարման վրա որակի ապահովման համակարգի ազդեցության բարձրացմանը:
4. Կազմակերպել Համալսարանում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ներքին աուդիտ արտաքին փորձագետների ներգրավմամբ:
5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով Համալսարանի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Հյուսիսային համալսարանի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:
7. Որոշումն ուժի մեջ է մտնում հավատարմագրման պետական գրանցամատյանում գրանցվելու պահից:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2022 թ. նոյեմբերի 25
ք.Երևան